Հավելված
ՀՀ կառավարության 2019 թվականի
փետրվարի 28-ի N 175 - Ն որոշման

Հ Ա Շ Տ Ո Ւ Թ Յ Ա Ն Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

քաղ. Երևան ____ _____ 2019 թ.

Հայաստանի Հանրապետության _____ նախարարությունը՝ ի դեմս _____ _____ -ի (այսուհետ՝ կողմ 1), մի կողմից և «Նաս Ջեներալ Թրեյդինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ ի դեմս _____-ի (այսուհետ՝ կողմ 2), մյուս կողմից (այսուհետ՝ միասին կողմեր), կնքեցին սույն հաշտության համաձայնագիրը (այսուհետ՝ համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Սույն համաձայնագրով կողմերը պայմանավորվեցին կանոնակարգել գյուղատնտեսական տեխնիկայի (Case IH magnum 310 մակնիշի տրակտորները (այսուհետ՝ ապրանք) հանձնման-ընդունման գործընթացը:

2. Կողմ 1-ը պարտավորվում է՝

1) կողմ 2-ից ընդունել համաձայնագրի N 1 հավելվածով նախատեսված 3 միավոր ապրանքը.

2) կողմ 2-ից ապրանքն ընդունել «Ապավեն Տերմինալ» փակ բաժնետիրական ընկերության ժամանակավոր պահպանման պահեստում.

3) կատարել սույն համաձայնագրի 2-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն ընդունած ապրանքի մաքսազերծման աշխատանքներն ու վճարումները.

4) կատարել «Ապավեն Տերմինալ» փակ բաժնետիրական ընկերության ժամանակավոր պահպանման պահեստում պահպանվող 7 միավոր ապրանքի՝ մինչև սույն համաձայնագրի 2-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն հանձնման օրը ձևավորված պարտավորությունները՝ համաձայն «Ապավեն Տերմինալ» փակ բաժնետիրական ընկերության կողմից ներկայացված հաշիվ - ապրանքագրի.

5) սույն համաձայնագրի 2-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն ապրանքի ընդունումից հետո ողջամիտ ժամկետում ապահովել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության և «Նաս Ջեներալ Թրեյդինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 2017 թվականի հոկտեմբերի 19-ին կնքված ՀՀ ԳՆ-ԲՄԱՊՁԲ-17/2-ԳՏՊՏ-54 պայմանագրի ապահովման գումարի վերադարձը կողմ 2-ին.

6) սույն համաձայնագրի 2-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն ապրանքի ընդունումից հետո ողջամիտ ժամկետում հրաժարվել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության և «Նաս Ջեներալ Թրեյդինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 2017 թվականի հոկտեմբերի 19-ին կնքված ՀՀ ԳՆ-ԲՄԱՊՁԲ-17/2-ԳՏՊՏ-54 պայմանագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետություն ներմուծված 4 միավոր ապրանքի համար մաքսային մարմնում որպես հայտարարատու հանդես գալուց.

7) իր իրավասության սահմաններում ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ «Ապավեն Տերմինալ» փակ բաժնետիրական ընկերության ժամանակավոր պահպանման պահեստում մնացած 4 միավոր գույքը կողմ 2-ի կողմից տնօրինելու նպատակով.

8) սույն համաձայնագրի 2-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն ապրանքի ընդունումից հետո հրաժարվել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության և «Նաս Ջեներալ Թրեյդինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 2017 թվականի հոկտեմբերի 19-ին կնքված ՀՀ ԳՆ-ԲՄԱՊՁԲ-17/2-ԳՏՊՏ-54 պայմանագրի շրջանակներում կողմ 2-ին վճարված 542725.89 (հինգ հարյուր քառասուներկու հազար յոթ հարյուր քսանհինգ ամբողջ ութսունհինը) ԱՄՆ-ի դոլարին համարժեք 274772312 (երկու հարյուր յոթանասունչորս միլիոն յոր հարյուր յոթանասուներկու հազար երեք հարյուր տասներկու) դրամ կանխավճարը հետ պահանջելուց:

3. Կողմ 2-ը պարտավորվում է՝

1) կողմ 1-ին հանձնել համաձայնագրի N 1 հավելվածով նախատեսված 3 միավոր ապրանքը.

2) սպրանքը կողմ 1-ին հանձնել «Ապավեն Տերմինալ» փակ բաժնետիրական ընկերության ժամանակավոր պահպանման պահեստում,

3) սույն համաձայնագրի 2-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն ապրանքի հանձնումից հետո մնացած 4 միավոր ապրանքը տնօրինել իր միջոցներով:

4. Կողմերն ընդունում են, որ՝

1) սույն համաձայնագրի կնքման պահից դադարում են Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության և «Նաս Ջեներալ Թրեյդինգ» ՍՊԸ-ի միջև

2017 թվականի հոկտեմբերի 19-ին կնքված ՀՀ ԳՆ-ԲՄԱՊՁԲ-17/2-ԳՏՊՏ-54 պայմանագրով սահմանված՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության իրավունքներն ու պարտականությունները.

2) սույն համաձայնագրի կնքման պահից չեն կարող միմյանց ներկայացնել այլ պահանջներ, քան սույն համաձայնագրի կատարման համար անհրաժեշտ պահանջները.

3) սույն համաձայնագրի կնքման պահից հրաժարվում են դատական կարգով պահանջներ ներկայացնելուց՝ բացառությամբ սույն համաձայնագրի կատարման շրջանակներում:

5. Սույն համաձայնագիրը կազմված է _____ էջից, կնքվում է _____ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ. յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

6. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ամողջ ծավալով կատարումը:

Կողմ 1	Կողմ 2
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ	Ն. ՓԱՇԻՆՅԱՆ